մնա քսան տարի։ Թէպէտ և յետոյ յիսուն տարու չափ աթոռը մնաց Շիրակայ Արգինա աւանում։ բայց Ս. Աջի մասին յիշատակութիւն չկայ։ Աչքի առաջ ունենալով, որ ԺԱ. դարում Բիւզանդական կայսրները շարունակ հետամուտ էին Հայոց կաթուղիկոսութիւնն Հայաստանի միջից վերցնելու, և երկիրն էլ արդէն մաս մաս եղած էր զանազան իշխանութիւնների ձեռքում, որ և պատճառ եղաւ, որ Պետրոս Ա. Գետադարձից յետոյ թէ աթոռը թափառական վիճակ ունեցաւ և թէ հանդէս եկան մի և նոյն ժամանակ մի քանի կաթուղիկոսներ, պէտք է կարծել թէ Ս. Աջը նոյն Աղթամարի կղզու վերայ և մնացել էր։ Այս երևում է նախ այն հանգամանքից, որ Բարսեղ Ա. Պահլաւունի կաթուղիկոսն (1080—1113 թ.) հրամայեց Աղթամարից բերել իւր մոտ Ս. Լուսաւորչի Աջը, քօղը և գօտին, բայց միաբանները չտուին, և երկրորդ որ Թոռնիկ Մամիկոնեանի որդին Դաւիթ արքեպիսկոպոսն, հիմք բռնելով որ Աղթամարում են Ս. Լուսաւորչի աջն և այլ սրբութիւնները, միաբանեցուց իրեն հետ տեղական եկեղեցականներին և իշխաններին և 1113 թուին ձեռնադրուեցաւ կաթուղիկոս, այդպէս ըստ կիզբն դնելով Աղթամարի աթոռի։ Այն ժամանակ արդէն Գրիգորի Գ. Պահլաւունին (1113—1163 թ.) ընտրուած և ձեռնադրուած էր Հայոց կաթուղիկոս, ուստի Սև լերան վերայ եկեղեցական ժողով գու-